The mentioned reforms, as a key guarantee for strengthening the trust of business community in the State, are within the logic of building new economic and legal relationships for further improving the investment and business environment. In this area the RA Government has undertaken certain steps by adopting the concept note of the inspection reforms since 2009. The latter aims to improve the existing inspection system by eliminating frequent and undue inspections, non-transparent inspection processes, administrative corruption and duplication of functions in the inspection process through making a transition to risk assessment-based audit system. In order to implement the provisions of the concept note, appropriate legislative amendments were made in 2011. As a result of the reform, several key provisions were established and all inspection bodies started working towards implementing a risk-based audit system.

At present, we have achieved several outcomes in the area of the inspection system reforms. The application of the risk-based audit methodologies and the availability of checklists has become a mandatory requirement for inspection bodies. It has been established that inspection bodies, according to their developed methodology approved by the RA Government, should classify businesses into three risk groups: high, medium and low, and focus their audits on higher risk areas and objects of inspection. Besides, it has been established that public inspection bodies must approve and publish in their websites in advance their annual audit plans. Subsequently, we can state that these changes have helped eliminate frequent, undue and non-transparent audits in the inspection processes. Presently, the risk-based audit system is implemented in virtually all inspectorates, other than the State Language Inspectorate.

To reduce administrative corruption, to eliminate duplication of functions in the inspection process, as well as to use resources more efficiently, the Government has undertaken the implementation of the inspection system optimization program. For accomplishing the above objectives, the draft Government Decree on Approving the Concept Paper of Optimization of the Inspection System in the Republic of Armenia and the Summary Action Plan for Optimization of the Inspection System in the Republic of Armenia, and the RA draft legislative package on Inspection Bodies were developed. It is planned to present the mentioned package in the near future to the RA National Assembly for approval which will be followed by the start of the optimization process itself. The first pilot step towards optimization was taken before the passage of the new legislative regulation by the RA National Assembly through the amalgamation of the State Labor and the Hygiene Anti-Epidemic Inspectorates. The new law stipulates a new and effective system of inspection bodies and regulates the legal status of inspection bodies, the principles and specifics of their establishment, governance, organization of activities, and other pertinent legal relations.

Improving Public Administration: (RA Government Staff, RA Ministry of Finance, RA Ministry of Economy)

Improvement of public administration is the main priority for the Government. Reforms in this area will allow to attain considerable fiscal and economic benefits in terms of both the efficiency of public revenues and expenditures, and improved conditions for competition and doing business. These are highly required resources for ensuring post-crisis growth. We keep our immediate focus on strengthening of the legislative basis in the key sectors of the Armenian economy (mining, nature protection, aviation) and improving the behavior of government officials. By introducing transparency and clarifying the role and responsibilities of the public and private sectors, we expect to increase private investments and employment opportunities in the areas of telecommunication and mining which are two key sectors in our economy.

For the purposes of rapid and safe delivery of services by the State, and ensuring the transparency of interactions with State agencies, the Government prioritizes the use of digital e-signatures during the

delivery of e-services by central and local government bodies. To this end, the Armenian legal framework should regulate the ensuring of uniformity, security and interaction of technical systems necessary for the electronic delivery of services by the Armenian government agencies and the use of e-signatures during the mentioned process. Besides, for the technical support of the e-services system, the Government plans to establish an electronic system operator which will ensure the technical support and coordination of the electronic system. In this regard, the RA Government has developed amendments to the respective legislative regulation.

Enhancement of the legal framework on e-commerce is a key element of public administration reforms. In this regard, for regulation of legal relationships in e-commerce and electronic conclusion of transactions, a series of legislative amendments were drafted. They should contribute to the development of e-society services in Armenia, the use of opportunities provided by e-commerce, and foster closer relations between local and foreign businesses along with triggering innovative investments by companies.

The launching of www.e-gov.am e-governance portal by the RA Government back in 2010 was an important step towards modernizing public administration and ensuring its transparency. The mentioned portal brings together all e-governance tools and databases of government agencies and provides a convenient environment for their use. A number of e-services are delivered in the portal, including in the areas of e-acceptance of licensing applications, e-registration of organizations, e-filing of tax returns, acceptance of e-visa applications, electronic information searches and requests filed with the Intellectual Property Agency, receipt of e-signatures, interactive public notices, single source procurements, interactive budget, judicial information system, etc.

Presently steps are taken to introduce new e-services and to improve the RA e-governance system. In particular, the World Bank Public Sector Modernization Project-III is being negotiated which envisions creation of a single administration and support center for e-governance systems, development and implementation of technical e-governance standards and rules for the purpose of secure on-line data sharing between the government information systems, creation of the e-gov.am portal and its applications for achieving accessibility of interactive and on-line government-citizen services for the Apple and Android executive cellular software packages.

Civil Service Policy: (RA Civil Service Council)

The policy role of the civil service gains a particular importance in the post-crisis development phase of the economy, and for its sustainable development we should be able to recruit and retain inexpensive and quality human capital. This will improve communication between the public and private sectors, and the competitiveness of the Armenian economic system can be fostered - rather than impeded - through enhancing government regulations. While the formulation of the competitive remuneration and compensation policy is a long-term objective which largely depends on our fiscal opportunities, we have decided to improve in the near future one of its tools, i.e., the performance-based civil service remuneration.

In order to improve the social status of public employees, as well as to increase the attractiveness of employment in the system, in 2012 the social package was introduced which allows its beneficiaries (civil servants, other public employees, as well as employees of public organizations in the areas of education, culture and social protection) and their family members to use certain social services, including health insurance (health package for 2014), repayment of mortgage loans, tuition fee, recreation. This is a socially-oriented package which is primarily beneficial for low-income civil servants because the package has a uniform proportionate coverage.

After the implementation of the performance appraisal system in the Civil Service, the system of periodic attestations will be abolished, as well as the Civil Service is moving towards decentralization which started with improved flexibility for hiring younger staff.

For staff motivation purposes the Government will increase the performance-based compensation supplements to civil servants (DPO-3 trigger). Measures to increase performance-based supplement payments aim to improve the public sector capacity to recruit and retain appropriately skilled employees. The Bank will support the prior action through an expert assessment of deficiencies of the existing system.

Public Financial Management: (RA Ministry of Finance)

As regards the public financial management, we would like to continue strengthening the key processes of the PFM system, namely, in the area of deepening the focus on budget performance along with reinforcing the management accountability and revenue administration. For the purpose of creating the bases for monitoring the efficiency of the RA public financial management system, a Public Expenditure and Financial Accountability assessment was conducted in 2013 in order to gain a comprehensive understanding of the quality of the existing RA public financial management system. As a result, the strengths and weaknesses of the Armenian public financial management system, the progress made since the 2008 PEFA assessment, the implemented and expected reforms were identified. The report was reviewed by the Public Expenditure and Financial Accountability Secretariat in terms of its consistency with internationally accepted requirements and received a 'PEFA CHECK' quality sign. This evidences that in Armenia consistent efforts are taken to align the public financial management system to international standards and public requirements.

As part of the PFM reform, the Government will continue the activities of implementing the Government Financial Management Information System (GFMIS) which will allow to automate the management of information flows between RA public administration bodies.

The Government will also continue implementing the procurement system reform along with ensuring the electronic organization of all competitive procurement procedures which will reduce corruption risks in the procurement system.

The Government will also consistently implement the program budgeting reform, and the necessary preconditions will be created for a full migration to program budgeting starting 2018.

As regards the legislative reforms in the area of **environmental impact assessment and mining** (RA Ministry of Nature Protection, RA Ministry of Energy and Natural Resources), during 2013-2014 the Government revised its legislative framework on mining. In this aspect it should be noted that the RA National Assembly has ratified the RA Law on Environmental Impact Assessment and Expertise which became effective on August 9, 2014.

Infrastructures: (RA MTA, State Water Committee)

A consistent policy will be implemented in the infrastructure area which will aim to ensure the sustainable development of portable water and irrigation systems and roads under the condition of increased efficiency of public spending which implies both government-financed routine repair and maintenance and public capital expenditures for creating new infrastructures.

In the portable water supply and removal sector, there are five water supply and waste water removal service providers .

The improvement and financial stability of the portable water supply and removal sector rely on ensuring sustainability of reforms in this sector, implementation of new investment projects, and effective management of water systems through a broader private sector involvement.

The Government will strive to increase the breakeven level of existing companies in the country and the quality of delivered services through the use of various tools and principles, including public-private partnership cooperation and lending investment policy.

For the purpose of ensuring the sustainability of the portable water supply and removal sector, a series of measures and projects have been implemented over the recent years which are ongoing by nature. These measures and projects aim to improve the recording systems, to ensure reliable, orderly and safe water supply and water removal, to increase the service delivery quality, and to develop the professional skills of the support staff. Water supply and water removal improvement programs financed from the State budget, as well as investment and credit proceeds aim to address these objectives.

In the irrigation sector, 2 irrigation companies and 42 water user associations are functional which supply irrigation water to end-users.

Over the last few years activities towards improving, reconstructing the existing systems and constructing new ones were implemented through WB, MCA and several other projects. As a result, internal irrigation networks, main channels and pump stations were rebuilt and constructed. Maralikh Reservoir was reconstructed.

In the irrigation sector, construction of new reservoirs, modernization of the existing infrastructures, deepening of institutional reforms, strengthening of participatory governance, introduction of maximally transparent and new-level water user relations are anticipated.

Transport sector: *(RA Ministry of Transport and Communication)*

In this sector the Government has made significant investments in the area of road rehabilitation and modernization over the last few years financed from the RA State budget, the WB and ADB. The road sector development will again be in the priority list of the Armenian Government over the next years.

With a view to lay a solid basis for road infrastructure expenditures, a road financing review will be conducted, and based on its recommendations, the RA Government will approve the road sector reform program. In order to increase the efficiency of road asset management, the system of road asset management will be introduced and operated which will support the decision-making in the area of road infrastructure financing.

Based on best international practices, a uniform bid package and contract for procuring performance-based road rehabilitation and maintenance works will be developed and piloted. As a result, sustainable financing of the rehabilitation, maintenance and operation of the RA inter-state and lifeline roads, more effective asset management and routine maintenance and operation of 60 percent of roads will be ensured.

Proportionate Territorial Development:

Proportionate territorial development is among the key tasks of the Armenian Government for the coming years. To this end, an assessment of relative marz advantages will be conducted and based on this assessment, development programs will be implemented.

Besides, major importance is attached not only to attracting capital investments for the proportionate development of territories, but also increasing the efficiency of their use. In this context it is planned to establish a methodology which will allow to assess the efficiency of anticipated capital

investments in the context of reducing poverty in the concerned region.

With the assistance of the World Bank, building on the previous years' performance outcomes and the experience of the Armenian Social Investment Fund, it is planned to create a Territorial Development Fund, and its tools will be used for assessing the aptitude of envisioned projects in terms of addressing the objectives of ensuring the above mentioned development and proportionality, as well as the efficiency of capital investments. It is anticipated that the Fund will become functional from January 1, 2015.

Administrative-territorial reforms:

For the purposes of ensuring the effective and coordinated implementation of the policy for strengthening local democracy, development of the local self-governance system and decentralization of power in Armenia, in particular, administrative-territorial reforms have an important role.

It is planned to apply proportionately the international experience in the area of local self-governance, particularly by using the possibility for deepening decentralization of power through analyzing, adapting and applying such experience. As a result of the reform, the key objectives of the policy for developing the local self-governance system and decentralization of power will be accomplished, i.e., preconditions for financial decentralization, strengthening of capacities of local self-governance bodies and development of local democracy will be ensured, the transparency and accountability of operations of local self-governance bodies, and the financial independence and autonomy of communities will significantly increase. Besides, as a result of amalgamation of communities, the proportional election system will be gradually implemented.

The goal of the reform is to strengthen the community capacities which will increase the efficiency of community spending and contribute to improving the quality of service delivery to the population at the local government level.

Program Monitoring and Evaluation

The RA Ministry of Finance is the key counterpart in implementing the LDP series.

The RA Ministry of Finance will also collect on a regular basis the main monitoring and evaluation indicators on the reform outcomes as anticipated under the LDPs.

Hovik Abrahamyan,

Prime Minister of the Republic of Armenia



OFFICIAL
DOCUMENTS

L8450-AM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Երևան – 10 , Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1

«06» _____ 10 20/14թ.

№ 01/02/16520-14

Զարգացման քաղաքականությունների նամակ Հայաստանի Հանրապետություն

**Պարոն Զիմ Յոնգ Կիմին
Համաշխարհային Բանկի նախագահ
Վաշինգտոն, ԱՄՆ**

Հարգելի պարոն Կիմ

Հայաստանի Հանրապետության անունից թույլ տվեք արտահայտել հարգանքներիս հավաստիքը:

Սույն նամակով ցանկանում եմք ներկայացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումների համայնապատկերը և արդի բարեփոխումների սպասվող միտումները:

Հետճգնաժամային Հայաստանի արտադրության ծավալները վերջին տարիներին վերականգնվեցին և տնտեսությունը շարունակական աճի ցուցանիշներ արձանագրեց: Սա տեղի է ունենում այն պարագայում, երբ համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումները արդեն երկու եռամսյակ շարունակ ճշգրտվում են նվազման ուղղությամբ, ինչպես նաև դեռևս առարկայական է տնտեսական իրավիճակի վատացման

վտանգը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական՝ հատկապես Ռուսաստանի տնտեսության ռիսկերով: Նշված պայմաններում Հայաստանի տնտեսական զարգացումները Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից որդեգրված համախառն առաջարկի խթանման քաղաքականության արդյունք է, որի հետևանքով երկրի տնտեսական աճի կառուցվածքում տեղի են ունենում որակական տեղաշարժեր հոգուտ արտահանելի հատվածի: Տնտեսության արտահանելի ճյուղերը, որոնք ավելի արտադրողական են ի համեմատ ոչ արտահանելի, հետճգնաժամային տարիներին դրսևորել են առաջանցիկ աճեր: Այս առումով վերջին տարիների տնտեսական զարգացումների արդյունքում արդյունաբերության արտահանվող ենթաճյուղերը սկսել են հանդես գալ որպես տնտեսության աճին նպաստող առաջնորդող ճյուղեր:

Կառավարության ծրագիրը:

2013 թվականի նախագահական ընտրություններից և 2014 թվականի ապրիլին նոր կառավարության ձևավորումից հետո նորանշանակ կառավարությունն իր գործունեության ծրագրով հաստատեց առաջիկա չորս տարիների ընթացքում Հայաստանի տնտեսական աճի ապահովման համար տնտեսության ներքին ռեսուրսների վրա հիմնված զարգացումը, ինչպես նաև արտահանման ծավալների ավելացմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը, որն իրականացվում է ներքին ռեսուրսների համակարգված և արդյունավետ օգտագործման ճանապարհով: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր ծրագրի իրականացմամբ 2014-2017 թվականների ընթացքում նպատակադրում է զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի միջնաժամկետ՝ 5.3 տոկոս աճի միջոցով, նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացում՝ մինչև 65.000 դրամ և աղքատության կրճատման ապահովում՝ 9 տոկոսային կետով: Վերոնշյալ թիրախներին հասնելու նպատակով ՀՀ կառավարությունն իր ծրագրով նախանշել է (ա) իրականացնել տնտեսական աճը խթանող քաղաքականություն և (բ) պահպանել և ուժեղացնել աղքատամետ սոցիալական քաղաքականությունը:

(ա) Տնտեսական աճը խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների իրականացման համար ՀՀ կառավարության և Կենտրոնական

բանկի հնարավորությունները առավել սահմանափակված են պարտքի և համապատասխանաբար գների ու ֆինանսական կայունության նպատակադրումներով: Այս պայմաններում տնտեսական աճը խթանող քաղաքականության հիմնական առաջնահերթությունը հանդիսանում է համախառն առաջարկի խթանումը, որի համար կձևավորվի գրավիչ գործարար միջավայր և կմեծացվեն արտահանման հնարավորությունները: Տնտեսական զարգացման նախադրյալների ձևավորման համար ՀՀ կառավարությունը նախաձեռնել է գործողություններ՝ ուղղված արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության շարունակականության ապահովմանը:

(բ) Աղքատամետ սոցիալական քաղաքականության շարունակական իրականացումը շատ կարևոր է երկրի համար, քանի որ 2009 թվականի տնտեսական ճգնաժամը բավականին խորացրեց աղքատության մակարդակը: ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական և սոցիալական քաղաքականությունների նպատակն է բնակչության համար ապահովել արժանավայել աշխատանք և բարեկեցություն: Նշված նպատակի իրականացման համար արդարացի վարձատրություն ապահովող աշխատատեղերի ստեղծման շարունակական քաղաքականությունը կլինի գերակայող կառուցվածքային և ոլորտային քաղաքականությունների նպատակներից:

Չնայած համաշխարհային տնտեսությունում գոյություն ունեցող և ի հայտ եկող անորոշություններին, այնուամենայնիվ Կառավարությունը նոր ծրագրով կիրագործի նաև երկարաժամկետ նպատակադրումները և քաղաքականությունները, որոնք հետաձգվել էին ճգնաժամով պայմանավորված բարձր անորոշությունների պատճառով, սակայն չեն կորցրել իրենց արդիականությունը: ՀՀ կառավարությունը զուգահեռաբար ամրապնդելու է դրանց չիրականացնելու հնարավոր ռիսկերի բացահայտման և չեզոքացման կարողությունները՝ երակարաժամկետ նպատակադրումների կատարողականի ապահովման և հնարավոր իրատեսական արդյունք ապահովելու համար: Երկարաժամկետ նպատակադրումներով շարժվելը ՀՀ կառավարությունը այժմ համարում է հետճգնաժամային իրավիճակում մեր տնտեսության արդյունավետ գործելու ավելի հրատապ հրամայական՝ առաջին պլան մղելով տնտեսական աճի խթանների և հիմքերի ամրապնդումը, ինչի թուլությունը բացահայտեց ճգնաժամը:

ՀՀ կառավարությունը նախաձեռնել և ընթացիկ տարվա մարտի 27-ի իր թիվ 442-Ն որոշմամբ հաստատել է ՀՀ կառավարության **2014-2025 թվականների Հեռանկարային Ջարգացման Ռազմավարական Ծրագիրը (ՀՋԾ)**, որը ճգնաժամով պայմանավորված չիրականացած Կայուն Ջարգացման Ծրագրի վերանայված տարբերակն է: ՀՋԾ-ում նախանշված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունների ընդհանրական համախումբը, նպատակները, զարգացման հիմնական խոչընդոտները և սահմանափակումները, գերակա նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները: Ընդ որում, երկրի զարգացման ներկա փուլի առանձնահատկություններից ելնելով որակյալ և բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով զբաղվածության ընդլայնումը հռչակվել է որպես ծրագրի հիմնական նպատակ: ՀՋԾ-ն հիմնվել է երեք գերակայությունների վրա: Դրանք են.

- 1) կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովմանն ուղղված տնտեսական քաղաքականություն.
- 2) բնակչության խոցելի խմբերին (ներառյալ՝ աղքատները) ուղղված ակտիվ սոցիալական և եկամտային քաղաքականություն.
- 3) երկրի կառավարման համակարգի արդիականացում, ներառյալ՝ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ աճի ապահովումը:

Ի տարբերություն տնտեսական զարգացման նախորդ փուլերի, երբ տնտեսական աճն ապահովվում էր հիմնականում աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, ՀՋԾ-ով իրականացվելիք գործողությունների արդյունքում ակնկալվում է, որ 2014 - 2025 թվականներին տնտեսության ոչ գյուղատնտեսական հատվածում տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսային կետի առնվազն 80 տոկոսը կապահովվի աշխատանքի արտադրողականության, իսկ մնացածը զբաղվածության ընդլայնման հաշվին: Ընդ որում, արդյունաբերությունում, որը կլինի զբաղվածության ընդլայնման առանցքային ոլորտներից մեկը, աճին մասնակցության համապատասխան համամասնությունները կկազմեն 75 և 25

տոկոս: Զբաղվածության ավելացումը դիտարկելով որպես առաջիկա տարիների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական նպատակ՝ եկամտային քաղաքականության գործողություններն ու միջոցառումները նախագծվելու են՝ առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ աշխատավարձերի աճը չգերազանցի արտադրողականության աճին՝ թույլ չտալով միավոր աշխատուժի արժեքի գործակցի աճ: Միևնույն ժամանակ, կտրուկ կրճատվելու է աշխատող աղքատների թիվը՝ նվազագույն աշխատավարձի աճի քաղաքականության իրականացման ճանապարհով: Վերոնշյալ շարունակական բարեփոխումները իրականացվում են ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ դոնոր կազմակերպությունների անգնահատելի աջակցության միջոցով: Համաշխարհային բանկի օժանդակությունը առանցքային նշանակություն ունի տնտեսության վերականգնման և հետագա կայուն աճի համար: Առաջարկվող Զարգացման քաղաքականության նոր գործառնությունն օժանդակելու է կայուն աճի հիմնարարների համար անհրաժեշտ պայմանների ամրապնդմանը, ինչը կայուն մակրոտնտեսական իրավիճակի ստեղծման գրավականն է:

Հետզանաժամային մակրոտնտեսական իրավիճակը

Չնայած տեմպերի որոշակի դանդաղեցմանը՝ տնտեսության վերականգնումը շարունակվել է նաև 2013 թվականին՝ հանգեցնելով մակրոտնտեսական իրավիճակի հետագա բարելավման: Ընդհանուր առմամբ տնտեսական աճը 2012-2013 թվականներին կազմել է համապատասխանաբար 7.2 և 3.5 տոկոս: Ընդ որում՝ 2013 թվականի տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր արտահանելի հատվածի աճով՝ վկայակոչելով նոր տնտեսական քաղաքականության արդյունավետությունը: 2014 թվականին նախորդ տարվա նկատմամբ տնտեսական ակտիվությունը (SUՑ) հունվար-հունիսին կազմել է 3.4 տոկոս աճ: Այնուամենայնիվ, որոշակիորեն պայմանավորված ներքին պահանջարկի աճով (աշխատավարձի աճ), ինչպես նաև հիմնվելով հանքահումքային ապրանքների արտահանման ընդլայնվող հնարարավորությունների վրա՝ (պայմանավորված հիմնականում նոր հանքավայրի շահագործմամբ)՝ կառավարությունը ջանքեր է գործադրելու, որ 2014 թվականի տնտեսական աճը լինի մոտ 4 տոկոսին՝ ապահովելով մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը: 2014թ զարգացումները վկայում

են, որ բյուջետային ծրագրով կանխատեսվող ՀՆԱ 5.2 տոկոս իրական աճի ցուցանիշի նվազեցման ուղղությամբ ռիսկերը նյութականացվում են: Դա հիմնականում պայմանավորված է հայրենական ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի նվազմամբ, ներդրումների ցածր մակարդակով և տրանսֆերտների ներհոսքի դանդաղմամբ: Արտաքին պահանջարկի նվազումն իր վրա կրում է հիմնականում Ռուսաստանի տնտեսական աճի դանդաղման ազդեցությունը:

Նախորդ տարվա ընթացքում ներդրումների՝ սպասվածից ցածր մակարդակի ձևավորումը՝ հիմնականում պայմանավորված ՕՈՒՆ-ի զգալի կրճատմամբ, իր ազդեցություն է թողնում 2014թ կանխատեսվածից ցածր ՀՆԱ աճի ձևավորման վրա ընթացիկ տարում: Վերջինս արտահայտվում է շինարարության ցածր աճի ցուցանիշներում: Սակայն պետք է արձանագրել որ 2014թ առաջին եռամսյակի տվյալներով ներդրումներն աճում են, որը հիմք կհանդիսանա հետագա տնտեսական աճի համար:

Տնտեսական վերականգնմանը մեծապես նպասել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն»-ը, որի արդյունքում 2013 թվականին արտահանման ծավալները իրական դրամային արտահայտությամբ գերազանցել են 2007թ. մինչճգնաժամային առավելագույն ցուցանիշը մոտ 42.4 տոկոսով: Իսկ ընթացիկ տարվա հինգ ամիսների արդյունքներով աճ է արձանագրվել հիմնականում ”ոչ հանքային ապրանքների” արտահանման հատվածում՝ աճել են թանկարժեք և կիսաթանկարժեք իրերի, մանածագործական իրերի, ինչպես նաև ծխախոտի արտահանման ծավալները:

Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում աճել է՝ 2013 թվականին կազմելով 26.2 տոկոս, ինչը շուրջ 11 տոկոսային կետով բարձր է մինչճգնաժամային (2007թ.) մակարդակից: Ընթացիկ հաշվի պակասուրդը ճգնաժամի (2009թ.) 17.6 տոկոս ցուցանիշի համեմատ առնվազն կրկնակի բարելավվել է՝ 2013 թվականին կազմելով ՀՆԱ-ի 8 տոկոսը: Կառավարությունը ակնկալում է, որ ընթացիկ հաշվի պակասուրդի բարելավումը միջնաժամկետում կշարունակվի: Սակայն, չպետք է անտեսել համաշխարհային զարգացման առկա դժվարությունները, աշխարհաքաղաքական վտանգները և դրանց հետ կապված հնարավոր արտաքին ռիսկերը: Նշված պայմաններում

գործընկեր երկրներում՝ հատկապես Ռուսաստանի պահանջարկի դանդաղումը, ինչպես նաև միջազգային շուկաներում բորսային ապրանքների գների անկայունությունը կարող են բացասաբար ազդել Հայաստանի տնտեսության վրա՝ նվազեցնելով արտահանման աճի տեմպերը:

Այնուամենայնիվ, արձանագրված արդյունքները վկայում են, որ 2009 թվականից մինչ օրս իրականացված մակրոտնտեսական քաղաքականությունը եղել է խելամիտ՝ արտաքին շուկերի կլանման և մակրոտնտեսական կայունության ապահովման գործում:

2013 թվականին երկրորդ կեսին էներգակիրների գների թանկացումը առաջ է բերել գնաճային ճնշումներ, որոնք, սակայն, տարեվերջին մեղմվել են պայմանավորված փոքր-ինչ զսպող մակրոտնտեսական միջավայրով, և գնաճը գրանցվել է թիրախային տիրույթի վերին սահմանին մոտ՝ 5.6 տոկոս: 2014-2017 թվականներին կանխատեսվում է, որ գնաճը կլինի նպատակային թիրախի 4% (+/-1.5) տոկոս միջակայքում: Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հատվածում գնահատվում են հավասարակշռված: Ընդ որում, արտաքին հատվածի ռիսկերը կապված են զարգացող երկրներում տնտեսական դանդաղ զարգացումների հեռանկարների, աշխարհաքաղաքական դեռևս անկայուն իրավիճակի հետ, իսկ ներքին տնտեսությունից եկող ռիսկերը՝ ներքին պահանջարկի զարգացումների հետ:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում նկատվել են հիմնականում թույլ գնաճային զարգացումներ: 2014 թվականի համաշխարհային տնտեսական աճի դանդաղ վերականգման տեմպերը կպահպանվեն, որի պայմաններում հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներից էական գնաճային ճնշումներ չեն սպասվում: Իսկ ներքին տնտեսությունում 2014 թվականի երկրորդ կեսին աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված աշխատավարձերի աճը սպառողական շուկայում կստեղծի թույլ գնաճային ճնշումներ, որը կչեզոքանա 2015 թվականին: Չնայած, 2014 թվականի երկրորդ կեսին հնարավոր են նաև գնաճի ստորին սահմանից բարձրացման ռիսկեր՝ էլեկտրաէներգիայի սակագների աճով պայմանավորված (հատկապես վերջինիս գնաճի վրա ունեցած երկրորդային ազդեցությամբ), այնուամենայնիվ 2014 թվականի տարեվերջում կանխատեսվում է գնաճային միջավայրի կայունացում տատանումների

թույլատրելի միջակայքի ստորին մասում, իսկ միջնաժամկետում այն կլինի նպատակային թիրախին մոտ՝ շնորհիվ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացված իրականացման:

Մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակը

Ըստ ՄԺԾԾ կանխատեսումների՝ 2015-2017 թվականներին Հայաստանի տնտեսության աճը կկայունանա տարեկան շուրջ 5.3 տոկոսի շրջանակներում, ինչը հիմնականում կպայմանավորվի արդյունաբերության և ծառայությունների աճով, ինչպես նաև կզուգորդվի համաշխարհային տնտեսական զարգացումներով, այդ թվում՝ նաև Եվրոպայի և Ռուսաստանի զարգացումներով, իսկ վերջինիս անորոշությունները բավականին մեծ են: Ընդ որում, յուրաքանչյուր տարվա համար կանխատեսվում է իրական ՀՆԱ-ի շուրջ 4.5 տոկոս ներուժային աճ, իսկ ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և հատկապես բիզնես միջավայրի լավացման արդյունքում այն կկազմի տարեկան շուրջ 5.3 տոկոս: Միաժամանակ, երկրի ներսում բարեփոխումների իրականացումը, հատկապես արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում, պետք է դրական ազդակ հաղորդեն Հայաստանում ներդրումային մթնոլորտը բարելավելու համար:

Հարկաբյուջետային և մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով Կառավարությունը իրականացնում է բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման քաղաքականություն, որպեսզի երկիրը չբախվի պարտքի կայունության հիմնախնդրին: Կառավարության որդեգրած մակրոտնտեսական քաղաքականության համատեքստում 2013 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի պակասուրդի 1.7 տոկոս պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվել է ՀՆԱ-ի 3.1 տոկոսային կետով:

ՀՀ կառավարությունը, ընդլայնելով պարտքի կառավարման գործիքակազմը, 2013 թվականին առաջին անգամ մուտք է գործել միջազգային կապիտալի շուկա՝ իրականացնելով 7 տարի մարման ժամկետով 700 մլն դոլար ծավալով եվրապարտատոմսերի թողարկում, որոնց արժեկտրոնի եկամտաբերությունը 6.0 տոկոս է, իսկ արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

Ելնելով մակրոտնտեսական, մասնավորապես՝ պետական պարտքի կայունության ապահովման նկատառումներից՝ ՀՀ կառավարությունը պարտքի կայունության խնդրին մեծ

ուշադրություն է դարձնում: Միջազգային պրակտիկայում կիրառվող մոդելներով կատարված հարկաբյուջետային կայունության վերլուծության արդյունքներով ՀՀ պարտքի կայունությունը բնութագրող ցուցանիշները կառավարելի մակարդակում են գտնվում: Վերլուծության ելակետային սցենարներով նախանշվել է հաջորդ տարիների համար պարտքի ներգրավման չափավոր քաղաքականության վարման անհրաժեշտություն, իսկ ելակետային սցենարի ներքո իրականացված շոկային թեստերը վկայում են, որ ՀՀ պետական պարտքի կայունությունը առավել զգայուն է ՀՆԱ-ի ցածր աճի, այնուհետև փոխարժեքի արժեզրկման նկատմամբ: Մակրոտնտեսական կանխատեսվող զարգացումների և հարկաբյուջետային քաղաքականության նախատեսվող ուղղությունների ներքո, երկարաժամկետ հատվածում պարտքի մարման գծով ռիսկերը կպահպանվեն ցածր մակարդակի վրա:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2015-2017 թվականների ռազմավարական ծրագրի համաձայն՝ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցի “Պետական պարտքի մասին” ՀՀ օրենքով նախատեսված շեմը և զարգացող երկրների վտանգավորության սահմանագիծը: Համեմատության համար նշենք, որ եթե 2013 թվականին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 46.5 տոկոս, ապա 2017 թվականին կանխատեսվում է այս ցուցանիշի բարելավում մինչև 41.7 տոկոս: Միաժամանակ, արտաքին պարտքի կառավարմանը ճկունություն հաղորդելու և արտաքին կապիտալի շուկան Հայաստանի տնտեսության մասնավոր հատվածի համար հասանելի դարձնելու նպատակով Կառավարությունը կարևորում է արտարժույթով պարտատոմսերի տեղաբաշխումը՝ ուշադրության կենտրոնում պահելով պարտքի միջնաժամկետ կայունությունը:

Այս պայմաններում հարկաբյուջետային կայունության ապահովման համար կարևորվում է բարձր տնտեսական աճի ապահովումը և հարկային ու մաքսային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների արագացման անհրաժեշտությունը: Նշվածով պայմանավորված՝ 2014-2017 թվականներն ընդգրկող հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնվելու է այն սկզբունքների վրա, որ առաջիկա տարվա համար հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավված մասը կուղղվի հարկային գերավճարների

նվազեցմանը՝ լրացուցիչ ներուժ հաղորդելով տնտեսական աճին, հետագա տարիների համար արդեն բարելավելով 0.3-0.4 տոկոսային կետով:

Հարկային եկամուտների բարելավման ապահովման մասով շարունակաբար իրականացվում է մի շարք միջոցառումներ: Դրանցից կարևորվում են.

1. 2014 թվականի հունվարի 1-ից ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի հարկումը տեղափոխվել է հարկման ընդհանուր համակարգ և սահմանվել է, որ ներմուծվող և արտադրվող ծխախոտի արտադրանքի համար ակցիզային հարկը հաշվարկվում է միասնական հաստատուն դրույքաչափերով, իսկ ավելացված արժեքի հարկը՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գնից: Հարկման նոր համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի ավելացնել պետական բյուջեի հարկային եկամուտները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկման նոր համակարգի ներդրման արդյունքում ծխախոտի արտադրանքի հիմնական մասի համար հարկային բեռը բարձրացել է:

2. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից) ԱՏԳ ԱԱ 2208 20 (սպիրտային թրմեր՝ կոնյակ), 2208 30 (վիսկի), 2208 40 (ռոմ և այլ սպիրտային թրմեր) ծածկագրերին դասվող ապրանքների համար նախատեսված ակցիզային հարկի դրույքաչափերը բարձրացվել են: Մասնավորապես, կատարված օրենսդրական փոփոխությամբ սահմանվել է, որ նշյալ ապրանքատեսակների համար ակցիզային հարկի դրույքաչափը կախված է այդ ապրանքատեսակների հնեցման աստիճանից, որն ուղղակի ազդեցություն ունի նշյալ ապրանքատեսակների շուկայական գների վրա:

3. 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, զինծառայողների դրամական եկամուտները հանվել են հարկման նպատակով նվազեցվող եկամուտներ համարվող եկամուտների ցանկից և ներկայումս հարկվում են եկամտային հարկով՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

4. Լայն սպառման ծավալներ ունեցող որոշ ապրանքատեսակների իրացման շրջանառության իրական ծավալները հաշվառելու և ստվերային շրջանառությունները կրճատելու նպատակով 2013 թվականի հուլիսի 1-ից ներդրվել է որոշ ապրանքատեսակների պարտադիր դրոշմավորման համակարգ: Սկզբնական փուլում պարտադիր դրոշմավորման

համակարգում ներառված էին երեք խումբ ապրանքատեսակներ (գարեջուրը, ջրերը և հյութերը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտադիր դրոշմավորման համակարգի ներդրման արդյունքում էականորեն ավելացել են նշված ապրանքատեսակներն արտադրողների և ներմուծողների կողմից հայտարարագրվող իրացման շրջանառությունների ծավալները և նրանց կողմից պետական բյուջեի վճարվող հարկերը՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2014 թվականի ընթացքում ընդլայնվել է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը՝ ներառելով նաև լայն սպառման այլ ապրանքներ: Ակնկալվում է, որ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկի ընդլայնումը կհանգեցնի այդ ապրանքներն արտադրող և ներմուծող հարկ վճարողների կողմից պետական բյուջե վճարվող հարկային եկամուտների աճին:

5. 2014 թվականի հունիս ամսվա ընթացքում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց ՀՀ կառավարության կողմից մշակված օրենսդրական նախագծերի փաթեթը, որի հիմնական նպատակներից մեկը հարկ վճարողների (հատկապես խոշոր հարկ վճարողների) կողմից ապրանքների իրացման գործարքների փաստաթղթավորման մակարդակի բարելավումն է, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել ստվերային շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետությունը և ապահովել պետական բյուջեի լրացուցիչ հարկային եկամուտներ:

Բացի այդ, ստվերային շրջանառությունների բացահայտման ուղղությամբ հարկային մարմնի կողմից իրականացվող միջոցառումների արդյունքում շարունակաբար ավելանում է էլեկտրոնային եղանակով դուրս գրվող հարկային հաշիվների քանակը:

6. 2013 թվականից սկսել է նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գործընթացը, որը նախատեսվում է ավարտել 2015 թվականի հունվարի 1-ին: Նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները հարկային մարմնին հնարավորություն կընձեռեն առավել օպերատիվ և արդյունավետ հսկողություն սահմանել հարկ վճարողների իրացման շրջանառությունների նկատմամբ:

7. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է «Տրանսֆերային գնագոյացման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Ներկայումս նախագիծը գտնվում է լրամշակման փուլում և նախատեսվում է ՀՀ Ազգային ժողովում նախագծի քննարկումները շարունակել աշնանային նստաշրջանի ընթացքում: Նախագծով

առաջարկվող վարչարարական գործիքակազմի միջոցով նախատեսվում է բարձրացնել հատկապես խոշոր հարկ վճարողների նկատմամբ կիրառվող հարկային վարչարարության արդյունավետությունը, որն ուղղված կլինի պետական բյուջե վճարվող հարկային եկամուտների ավելացմանը:

8. Նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից սկսած՝ բարձրացնել ոչ մետաղական օգտակար հանածոների բնօգտագործման վճարների դրույքաչափերը:

9. Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից շարունակվում են աշխատանքները գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել երկրում տնտեսական ակտիվության մակարդակը:

Գործարար միջավայրի շարունակական բարելավման քաղաքականության շրջանակներում հարկային համակարգում ընթացող բարեփոխումներին մասնավոր հատվածի և ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը ապահովելու, ինչպես նաև հարկային մարմնի և տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների միջև կառուցողական երկխոսության հարթակ ձևավորելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվել է հարկային խորհուրդ, որի կազմում ներառվել են նաև գործարար շրջանակների շահերը ներկայացնող մի շարք մասնագիտական հասարակական կազմակերպությունների ու միությունների ներկայացուցիչներ: Հարկային խորհուրդը արդեն իսկ գումարել է իր առաջին նիստը, որի ընթացքում քննարկվել են գործարար միջավայրի բարելավման և հարկային օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկներ:

Բացի այդ, հարկային օրենսդրությունը պարզեցնելու, հստակեցնելու, համախմբելու, ինչպես նաև հարկային համակարգի կայունությունն ու կանխատեսելիությունը ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը սկսել է հարկային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքները: Այդ աշխատանքները կանոնակարգված ձևով իրականացնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվել է հարկային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքային խումբ:

Սոցիալական ռիսկերի կառավարում և մարդկային կապիտալի զարգացում

Առաջիկա տարիներին Կառավարության՝ սոցիալական ռիսկերի մեղմման քաղաքականության գերակայությունն է ապահովել նախանշված առանցքային սոցիալական տրանսֆերտները և ներդրումները, սակայն մենք զգուշությամբ կկառավարենք հատկացումները՝ հաշվի առնելով բյուջետային լարվածությունը: Միաժամանակ, հաշվի առնելով ճգնաժամի պայմաններում սոցիալական խոցելիության հնարավոր մեծացումը, ինչպես նաև 2012 թվականի աղքատության մակարդակը, որը կազմել է 32.4 տոկոս՝ մենք նախատեսում ենք նախ սոցիալական տրանսֆերտների հասցեականության և մեր ծրագրերի ընդհանուր արդյունավետության բարձրացման միջոցով հնարավորինս ընդլայնել կարիքավոր շահառուների թիվը:

Կառավարությունը, համաձայն Հեռանկարային Ռազմավարական Զարգացման Ծրագրի նպատակադրումների, տնտեսական ու սոցիալական քաղաքականության հիման վրա նախատեսում է 2017 թվականին աղքատության մակարդակը հասցնել 23.5 տոկոսի: Աղքատության կրճատման հիմնական գործոնները կլինեն տնտեսական աճով պայմանավորված բնակչության աշխատանքային եկամուտների աճը, ինչպես նաև սոցիալական ապահովագրությանն ու սոցիալական աջակցությանն ուղղված պետական ծախսերի ու դրանց նպատակայնության աճը:

Սոցիալական ապահովության ցանցեր:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մեր միջամտություններն ուղղված են եղել աղքատության հաղթահարմանն ուղղված կարևորագույն ծրագրի՝ ընտանեկան նպաստների և սոցիալական ապահովության մյուս ծրագրերի հասցեականության բարձրացմանը: Ճգնաժամային, ինչպես նաև հետճգնաժամային տարիներին, ԶԲԳ-ի օժանդակությամբ Կառավարությունը պահպանեց առաջնահերթ սոցիալական ծախսերի ծրագրերի կշիռը բյուջեում՝ շեշտը դնելով առավելապես ի նպաստ աղքատ և խոցելի բնակչությանն ուղղված ծրագրերի, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության ցանցերի, կենսաթոշակների և առողջապահության և կրթության ոլորտի առաջնահերթ ծրագրերի վրա: Ներկայումս Կառավարությունը կարևորում է համաձայնեցված սոցիալական ծախսումների իրականացումն ըստ բյուջետային տարվա և ՄԺԾՇ շրջանակներում ծրագրավորվածի: Այս ուղղությամբ, մասնավորապես 2012-2014 թթ. ընթացքում պետական բյուջեից ընտանեկան

նպաստի համար ֆինանսավորման ծավալը յուրաքանչյուր տարի կազմել է մոտ 37.1 մլրդ. դրամ, 2011 թ. 35.5 մլրդ. դրամի դիմաց. ընդ որում ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կազմել է 29 350 դրամ, իսկ միջինում ստացել են համապատասխանաբար 2012 թ.' 96 309, 2013 թ.' 102570 ընտանիք, 2011 թ. 86 138 ընտանիքի դիմաց:

Կառավարությունը բարձրացնում է ընտանեկան նպաստի ծրագրի ծածկույթը, միևնույն ժամանակ բարելավելով դրա թիրախավորումը: Սոցիալական աջակցության ոլորտի բաղկացուցիչներից մեկի ու աղքատության կրճատման կարևոր գործոնի նկատմամբ մեր գերակայությունը նպաստների համակարգին ուղղվող պետական միջոցների աճն է, ինչպես նաև միջոցների առավել հասցեական ու արդյունավետ օգտագործումը՝ բնակչության աղքատ խավերի կենսամակարդակի բարձրացման և այդպիսով՝ երկրում աղքատության ու անհավասարության մեղմման նպատակով: Այս ուղղությամբ մենք նպատակադրել ենք ընտանեկան նպաստի միջին չափի ու համակարգի հասցեականության աճ, ինչպես նաև աղքատ բնակչության առավելագույն ներգրավում համակարգում: 2014 թ. հունիս ամսվա նպաստառու ընտանիքների թիվը կազմում է շուրջ 103 հազար ընտանիք: Մինչև 2014 թ. հուլիս ամիսը ներառյալ նպաստի միջին չափը կազմել է 29350 դրամ, իսկ օգոստոս ամսից այն կազմելու է 30350 դրամ:

Կառավարությունն ուշադրությունը սևեռել է նաև սոցիալական ապահովության ցանցի ծրագրերի կառավարման և մոնիթորինգի ամրապնդման վրա՝ հասցեականության արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Պետական նպաստների համար տեղեկատվության առցանց ստացման մեխանիզմների ներդրման նպատակով 2011 թ. սկսած մշակվել և ընդունվել են մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝ 2011 թ. հունիսին ընդունվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

2012 թ. հունվարից ընտանիքների անապահովության գնահատման բանաձևում (ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի N 1859-Ն որոշում) մեղմացվել է ընտանիքի եկամուտի ազդեցությունը տվյալ ընտանիքի անապահովության միավորի ձևավորման վրա, որի արդյունքում ցածր աշխատավարձ ստացող աղքատ ընտանիքները հնարավորություն են ստանում ձեռք բերել ընտանեկան նպաստի իրավունք (սոցիալական պասիվ ծրագիր տնտեսապես ոչ ակտիվ բնակչության համար): Միաժամանակ, աշխատանքներ են տարվում

հանրապետությունում իրականացնելու նաև զբաղվածության հասցեական ծրագրեր, ինչը նշանակում է աղքատ ընտանիքների (ընտանեկան նպաստի իրավունք չունեցող) տնտեսապես ակտիվ անդամների համար կազմակերպել զբաղվածության ակտիվ ծրագրեր՝ դրանով ընդլայնելով աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերում աղքատ բնակչության ընդգրկվածության մակարդակը:

Շարունակվել է ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների կողմից տրամադրված մի շարք տվյալների ճշգրտումը՝ ՀՀ այլ նախարարություններից, գերատեսչություններից ստացվող տեղեկատվական բազաներում առկա տվյալների հետ համադրման միջոցով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թ. դեկտեմբերի 12-ին ընդունվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (ուժի մեջ է մտել 2014 թ. հունվարի 1-ից), որի կապակցությամբ ամբողջությամբ վերանայվել են ընտանեկան նպաստի, որն այլևս կոչվում է կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ, իրավունքի սահմանման հիմնական որոշումները (ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 30-ի N65-Ն և N145-Ն որոշումներ), ինչպես նաև իրականացվել են կազմակերպական աշխատանքներ, որոնց արդյունքում բարելավվել է տեղեկանքների առցանց տրամադրման որակը:

2013 թ. դեկտեմբերի 11-ին ընդունվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը (ուժի մեջ է մտել 2014 թ. հունվարի 1-ից), որով սահմանվել են աշխատաշուկայի պետական կարգավորման նոր մեխանիզմներ և իրականացվում են զբաղվածությանը նպաստող ծրագրեր: Մասնավորապես, գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում, ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում, աշխատանքի տոնավաճառի կազմակերպում, աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում, գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ

փոխհատուցման տրամադրում, գործազրկության նպաստի վճարում, մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում, հանրային իրազեկում, աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում, սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում:

Կառավարությունը հաստատել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ծրագիրը («Կառավարության 2012 թ. հուլիսի 26-ի N952-Ն որոշում»), որով սահմանվել է, որ ինտեգրված սոցիալական ծառայությունների փորձնական ծրագիրն իրականացվելու է ՀՀ Արարատի մարզի 4 կենտրոններում և այնուհետև ներառվելու են բոլոր կենտրոնները, որոնք կվերանորոգվեն և կվերազինվեն: 2013 թ. փետրվարին գործել են արդեն իսկ նշված 4 կենտրոնները, որոնց թիվն ավելացվել է 15-ով և 2013 թ. մայիսի դրությամբ ինտեգրված սոցիալական ծառայությունների թիվը կազմել է 19 (ներառյալ ՀՀ Արարատի մարզի 4 կենտրոնները):

ՀՀ Ազգային ժողովում է գտնվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ամբողջությամբ վերանայվում է), որը ձևավորում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի իրավական հենքը:

Աշխատանքներ են տարվում նաև կենսաթոշակային ապահովության ոլորտի տեղեկատվական ենթակառուցվածքները կատարելագործելու ուղղությամբ: Մասնավորապես, արդեն իսկ ստացվել և (ինքնաշխատ եղանակով) կիրառվում է բնակչության պետական ռեգիստրում առկա կենսաթոշակային ոլորտին անհրաժեշտ տեղեկատվությունը: Ընթացքի մեջ են համապատասխան ծրագրային ապահովում ստեղծելու աշխատանքները: Հստակեցման փուլում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական ՍԷԿՏ համակարգի տվյալները ստանալու և կենսաթոշակային համակարգում կիրառելու ընթացակարգերը:

Նշված աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալում ենք նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և սխալների հավանականությունը: Մոտ ապագայում ամբողջությամբ

կավտոմատացվեն տեղեկատվական համակարգերից տվյալների ստացման ընթացակարգերը և ներքին կառավարման համակարգերը:

Այս ոլորտում կառավարությունը բարեփոխում է իրականացրել ոչ միայն կատարելագործելով պետական կենսաթոշակի գործող համակարգը, այլ օրենսդրական հիմքեր է ստեղծել նոր՝ աշխատավարձի հետ ուղղակի կապ ունեցող և անձնական պատասխանատվության վրա հիմնված կուտակային կենսաթոշակի համակարգի ներդրման համար:

Պետական մարմիններում, ինչպես նաև կրթության, մշակույթի, սոցիալական պաշտպանության ոլորտների կազմակերպություններում աշխատակիցների և նրանց անմիջական ընտանիքի անդամների առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման նպատակով սոցիալական փաթեթը 2014-2016թթ ժամանակահատվածում նախատեսվում է տարեկան ավելի քան 20.2 մլրդ դրամ:

Առողջապահություն:

Կառավարությունը նախատեսում է ավելացնել առողջապահության ոլորտի ֆինանսավորումը, սակայն միմիայն արդյունավետության բարելավման միջոցառումների զուգահեռ ներդրմամբ: Կառավարությունն ավարտել է համավճարների ռազմավարական մոտեցման նախապատրաստումը, որի նպատակն էր ավելացնել հիվանդանոցային ծառայությունների համար փոխհատուցումը, ներդնել (կամ հաճախ պաշտոնական դարձնել) համավճարները և ապահովել «գրպանից կատարվող» ընդհանուր ծախսերի ավելի ցածր մակարդակ՝ ամենաաղքատ տնային տնտեսությունների համար:

«Կառավարությունը ջանքեր կգործադրի մեղմելու առողջապահության ոլորտում համավճարի քաղաքականության հնարավոր ազդեցությունն աղքատների վրա՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրանց ծածկույթը դեռևս բավարար չէ: Այս առնչությամբ, կքննարկվեն հնարավոր մեխանիզմներն այն բարելավելու նպատակով, ներառյալ՝ տվյալ ծրագրի համար համապատասխանելիության միավորը ընտանեկան նպաստի ծրագրի (ԶԲՎ-2 մեկնարկիչ) գնահատականի միավորին հավասարեցնելու հարցը: Բյուջետային գործընթացի շրջանակներում՝ 2014 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության

սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված՝ աղքատության ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված նպաստառուների անապահովության միավորը 36-00-ից 30-00 միավորի իջեցնելու հետ կապված ծախսերի աճը կկազմի 2,870.5 մլն դրամ, իսկ Իմունականխարգելման ազգային ծրագրի գծով գնվող պատվաստանյութերի գների և քանակի ավելացման հետ կապված՝ 256.2 մլն դրամ:

Կառավարության կողմից լրացուցիչ քայլեր կձեռնարկվի նաև բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված անձանց համար պետական պատվերի գների աստիճանական վերանայման համար:

Կառավարությունը շարունակելու է ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ նպատակ հետապնդելով բարելավել բնակչության առողջական վիճակի բնութագրիչները՝ առողջապահական ծառայությունների մատչելիության, հասանելիության և որակի բարձրացման ճանապարհով:

Գործարար միջավայրի բարելավում: (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ)

ՀՀ կառավարության կողմից բարձր գործարար ակտիվության և կայուն ներդրումային հոսքեր ներգրավելու համար նպաստավոր միջավայրի ձևավորումը դիտվում է որպես երկրում տնտեսական առաջընթացի գրավականներից մեկը: Այս ուղղությամբ Կառավարությունը քաղաքականության համապարփակ օրակարգ ունի, որոնք որոշ մասով ներառված են նաև նոր ԶԲԳ փաթեթում: Վերջինս նաև կիրառում ենք որպես գործարար բարեփոխումների ուղղությամբ որոշ նախաձեռնությունների կիրարկման կամ մոնիտորինգի շրջանակ:

Գործարար միջավայրի բարելավման ներկա ուղղություններն ընդգրկում են ներդրումների ներգրավման և գործարարությամբ զբաղվելու տեսակետից վարչարարական խոչընդոտները նվազագույնի հասցնելը, գործարար միջավայրի վրա կարգավորման ազդեցությունների գնահատման համակարգի շարունակ կատարելագործումը, պետություն-մասնավոր հատված արդյունավետ երկխոսության ապահովման և գործարար խոչընդոտների բացահայտման նպատակով հետադարձ կապի ինստիտուտի կայացումը,

գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու համար նախատեսված թույլտվությունների և լիցենզիաների ցանկի էական կրճատումը:

Գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ Կառավարության շարունակական գործողությունների դրական արդյունքներն արձանագրվում են նաև Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցներում՝ արտահայտվելով երկրի զբաղեցրած դիրքի առաջընթացով: «Գործարարությամբ զբաղվելը 2014» զեկույցի տվյալներով՝ Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 37-րդ տեղը: Վերջին երեք տարիների (2011, 2012, և 2013թթ.) զեկույցների տվյալներով Հայաստանի դիրքը բարելավվել է 26 կետով: Նշենք նաև, որ զեկույցի տվյալներով Հայաստանի գործարար միջավայրը լավագույնն է ԱՊՀ երկրների շարքում և երկրորդն է տարածաշրջանում՝ զիջելով միայն Վրաստանին:

Վարկավորման հասանելիություն: (ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ)

ՀՀ կառավարությունը կարևորում է վարկերի հասանելիությունը մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար:

Այս ուղղությամբ ՀՀ ԿԲ-ն իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ ուղղված վարկային ռեգիստրի և հաշվետվական համակարգերի աշխատանքների բարելավմանը, Հայաստանում բոլոր բանկերին ու վարկային կազմակերպություններին հաղորդվող սպառողական վարկերի տվյալների նկատմամբ առանձնակի պահանջների սահմանման միջոցով, համապատասխան ստորաբաժանումների կանոնադրություններում փոփոխություններ կատարելու միջոցով, ՀՀ ԿԲ-ի վարկային ռեգիստրի գործառույթների սահմանափակման միջոցով և վարկային հաշվետվական համակարգերի նկատմամբ հսկողության համար պատասխանատվության հստակեցման և կոնսոլիդացման միջոցով:

ՀՀ կառավարությունը շարունակում է ՀՀ ԿԲ-ի հետ համատեղ միջոցներ ձեռնարկել, որպեսզի լուծի ՓՄՁ ներկայիս խնդիրները՝ կապված բանկերից վարկ ստանալու համար գրավի տրամադրման հետ՝ բարելավելով նորմերը և կանոններն, ինչպես նաև ենթակառուցվածքները շարժական գրավի կիրառման գրանցման և ընդարձակման համար,

ներառյալ շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման առցանց ռեգիստրի օգտագործումը: Այդ կապակցությամբ տարվող աշխատանքների շրջանակներում արդեն իսկ մշակվել են «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների և մի շարք այլ օրենքների նախագծերը, որոնց իրավական ուժ տալու նպատակով կատարվում են համապատասխան աշխատանքներ: Նշենք, որ դրանցով կարգավորում են շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման ոլորտում առաջացող հարաբերությունները, սահմանվում է շարժական գույքի գրանցում իրականացնող մարմնի լիազորությունների շրջանակը:

ՀՀ կառավարությունը կատարում է նաև իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների կատարելագործում՝ ապահովված գործարքների համար, ներառյալ շարժական և անշարժ գրավի ինտերնետով հասանելի էլեկտրոնային ռեգիստրը: ՀՀ արդարադատության նախարարությունը, համագործակցելով Համաշխարհային բանկի և ՀՀ կենտրոնական բանկի հետ, մշակել և ՀՀ կառավարությանն է ներկայացրել «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման» մասին ՀՀ օրենքի նախագիծը, որը և հավանության է արժանացել վերջինիս կողմից: Նշված օրենքով նախատեսվում է ապահովված գործարքների արդյունավետ կիրարկման նպատակով ստեղծել առցանց ռեգիստր, որը կապահովի այդ գործարքների մասին հանրային իրազեկումը և տվյալ գործարքների առարկա հանդիսացող գույքի նկատմամբ նախապատվության իրավունքի գրանցումը, ինչն իր հերթին կբարձրացնի տվյալ տեսակի գործարքների ապահովությունը և կնվազեցնի դրանց հետ կապված ռիսկերը: Տվյալ ռեգիստրը նախատեսվում է գործարկել մինչև 2015 թվականի հոկտեմբեր ամիսը:

Կառավարությունը նախատեսում է նաև փոփոխություն իրականացնել անվճարունակության մասին օրենսդրությունում (ՁԲԳ-3 մեկնարկիչ), որով նախատեսվում է արտադատարանային արբիտրաժի, կորպորատիվ վերակազմավորման, պարտքի վերաձևակերպման, ինչպես նաև ձեռնարկությունների վերաֆինանսավորման հնարավորությունը:

Ֆինանսական ոլորտի բարելավում

Ֆինանսական ոլորտի զարգացմանը նպաստելու թափանցիկությունը բարելավելու և կայունությունն ամրապնդելու նպատակով Կառավարությունը իրականացնում է համապատասխան աշխատանքներ՝ բարելավելու օրենսդրական դաշտը ֆինանսական խմբերի համախմբված վերահսկողության իրականացման առումով (ՁԲԳ-3 մեկնարկիչ): Սա կպահանջի ֆինանսական խմբերի նկատմամբ հսկողություն ունեցող անձանց շրջանակի սահմանում, ինչպես նաև այդ անձանց բացահայտման նկատմամբ (ՁԲԳ-3 մեկնարկիչ) համապատասխան պահանջների սահմանում, ինչն էլ կմոտեցնի Հայաստանի Հանրապետության ֆինանսական ոլորտի վերահսկողության համապատասխանությունը ԵՄ հրահանգների և բանկային վերահսկողության Բազելյան հիմնարար սկզբունքների պահանջներին:

Ավիացիայի ոլորտի բարելավում

2013 թվականին ՀՀ կառավարությունը առանցքային բարեփոխումներ մեկնարկեց քաղաքացիական ավիացիայի բնագավառում, ինչը նշանակալի դեր ունի դեպի ծով ելք չունեցող Հայաստանի տնտեսական աճի ու զարգացման համար և վճռորոշ բարեփոխում է ՁԲԳ նոր շարքերի համատեքստում:

2013 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումների մասին» (Ծրագիր) որոշումը, որով Հայաստանը քաղաքացիական ավիացիայի և օդային հաղորդակցության ոլորտում հռչակել է բաց երկնքի քաղաքականություն: Ծրագրի իրականացումն ապահովվում է Վարչապետի որոշմամբ ստեղծված է աշխատանքային խմբի կողմից:

Բաց երկնքի քաղաքականությունը ներառում է մի շարք առանցքային ուղղություններով հասցեական միջոցառումներ, որոնց թվում՝ ոլորտը կանոնակարգող նոր ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումն է: Վերջինս նպատակ ունի ապահովել քաղաքականության մշակման, դժբախտ պատահարների հետաքննության և տեխնիկական կանոնակարգման ու

անվտանգության նկատմամբ հսկողության գործառույթների տարանջատում, ինչը նաև ամրագրված է որպես ԶԲԳ 2 շարքի նախապայման գործողություն:

Ավիացիայի ոլորտի նկատմամբ պետական վերահսկողության նոր ու միջազգային չափանիշներին համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածք սահմանելու նպատակով ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել, որով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդիսանում է քաղաքացիական ավիացիայի բնագավառում տնտեսական քաղաքականության մշակման պետական կառավարման լիազորված մարմին: Նախարարության կանոնադրությամբ ամրագրվել են համապատասխան լիազորություններ օդային հաղորդակցության միջազգային պայմանագրերի շուրջ բանակցությունների վարման ու պայմանագրերի կնքման, անհրաժեշտ մասնագրերի ու թույլտվությունների տրամադրման պահանջների ու ընթացակարգերի մշակման, բողոքարկման վարույթների գործընթացին մասնակցության, ոլորտի քաղաքականության ազդեցության գնահատման, ֆինանսական և տնտեսական ցուցանիշների մասով վարչական վիճակագրական ռեգիստրի վարման մասով: Նախարարության աշխատակազմում ձևավորվել է Քաղաքացիական ավիացիայի քաղաքականության և տնտեսական կարգավորման վարչությունը:

Հայաստանում բաց երկնքի քաղաքականության հռչակման վերաբերյալ տեղեկացվել են գործընկեր պետությունների կառավարությունները դեռևս 2013 թվականի դեկտեմբերին: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ապահովվել է նաև տեղեկացումը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը (ICAO, International Civil Aviation Organization), որով կազմակերպության անդամ պետությունների ավիացիոն իշխանություններն անմիջականորեն իրազեկվել են քաղաքացիական ավիացիայի ոլորտում ՀՀ կառավարության նոր քաղաքականության մասին: Անդամ պետությունների կողմից առաջարկներ են ստացվում առկա պայմանագրերի վերանայման կամ նոր պայմանագրերի կնքման վերաբերյալ:

Ակտիվ աշխատանքներ են ընթանում օդային հաղորդակցության ոլորտում արդեն իսկ համագործակցող և պոտենցիալ գործընկեր պետությունների ավիացիոն իշխանությունների հետ բաց երկնքի քաղաքականության շրջանակներում բանակցությունների վարման, մասնավորապես՝ գործող օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական պայմանագրերի վերանայման (կանոնավոր և ոչ կանոնավոր չվերթների մասով բոլոր

գործող սահմանափակումների վերացում, ոլորտի ազատականացում) և նոր երկկողմ միջազգային պայմանագրերի նախագծերի մշակման ուղղությամբ: Բանակցություններ են վարվում նաև ԵՄ-ՀՀ ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի կնքման շուրջ:

Ավիացիայի բնագավառում որդեգրված բարեփոխումների իրականացման նպատակով համագործակցում ենք միջազգային գործընկեր կառույցների հետ, որոնք աջակցում են իրականացվող աշխատանքներում մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ բանակցություններ, օրենսդրական դաշտի նախագծում, ինստիտուցիոնալ կարգավորում, լիցենզավորում, հանրային կապեր և գովազդ, բարձր որակավորում ունեցող փորձագետների և խորհրդատուների ներգրավմանը:

Բարեփոխումների իրականացմամբ դրական արդյունքներ ենք ակնկալում շահառուների լայն շրջանակի համար: Մասնավորապես, զբոսաշրջության ոլորտում սպասվում է ներգնա զբոսաշրջիկների թվի աճ և աշխարհագրության ընդլայնում, ավիացիոն ոլորտում՝ գործարար միջավայրի կանխատեսելիության և թափանցիկության մակարդակների բարձրացում, գործարար շրջանակների տեսանկյունից՝ գործարար հաղորդակցության համար առավել հարմարավետ (ժամկետներ, ծախսեր) պայմաններ և ընդլայնված հնարավորություններ:

Ոլորտի ազատականացման դրական արդյունքներն արդեն տեսանելի են: Վերջին ամիսներին օդային փոխադրումների ոլորտում արձանագրվում է ուղևորների թվի, չվերթների քանակի, երթուղիները սպասարկող ավիաընկերությունների թվի կանոնավոր աճ: Այսպես, 2014թ. առաջին կիսամյակում 2013թ. նույն ժամանակահատվածի համեմատ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ուղևորահոսքն ավելացել է 25.1 տոկոսով, թռիչքների հաճախականությունը աճել է 28.7 տոկոսով, իսկ ավիատոմսերի գները նվազել են 15.5 տոկոսով: Հայկական շուկա է մուտք գործել 14 նոր ավիաընկերություն:

Հարկային և մաքսային բարեփոխումներ

Գործարար միջավայրի շարունակական բարելավման քաղաքականության ներքո կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները: Մասնավորապես,

1) ընդլայնվել է էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող ու հարկային հաշիվներ դուրս գրող հարկ վճարողների շրջանակը,

2) հարկ վճարողներին հնարավորություն է ընձեռվել հարկերը վճարել էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև իրականացվել են հարկերի էլեկտրոնային եղանակով վճարման համակարգի առավելությունների վերաբերյալ զանգվածային իրազեկման մի շարք միջոցառումներ,

3) հարկ վճարողների և հարկային տեսուչների շփումը կրճատելու և հարկ վճարողի պարտավորությունների մասին հարկային մարմնի կողմից տեղեկատվության տրամադրումը ավտոմատացնելու նպատակով մշակվել և առաջիկայում ՀՀ կառավարության կողմից կհաստատվի համապատասխան օրենսդրական նախագծերի փաթեթը: Նշյալ փաթեթով նախատեսվում է նաև հարկ վճարողներին հնարավորություն ընձեռել առկա գերավճարների հաշվին իրենց պարտավորությունների դիմաց հաշվանցման և գերավճարի վերադարձի համար դիմումը, ինչպես նաև գերավճարների մասին տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումը հարկային մարմին ներկայացնել էլեկտրոնային եղանակով,

4) հարկային օրենսդրության վերաբերյալ հարկ վճարողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև հարկային և մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունները առավել հասանելի դարձնելու նպատակով իրականացվել են հարկ վճարողների անվճար ուսուցման դասընթացներ, ինչպես նաև ընդլայնվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի փոստային բաժանմունքներում հարկ վճարողների սպասարկման կետերի ցանցը,

5) ս.թ. մայիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-46-Ն օրենքով (ուժի մեջ է մտել ս.թ. հուլիսի 5-ից)՝

ա) արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող բարեխիղճ հարկ վճարողների համար ներդրվել է լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտը և սահմանվել է, որ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստացած տնտեսա-

վարող սուբյեկտները օգտվում են մաքսային պարզեցված ընթացակարգերից ու մաքսային վճարների կատարման ճկուն մեխանիզմներից,

բ) նախատեսվել է մաքսային մարմինների կողմից նախնական որոշման տրամադրման ընթացակարգ և սահմանվել է, որ նշյալ որոշումը կարող է օգտագործվել արտահանման կամ ներմուծման ժամանակ վճարման ենթակա վճարների որոշման և մաքսային ձևակերպումների նպատակներով պահանջվող ոչ սակագնային կարգավորման միջոցների որոշման համար: Նշյալ ընթացակարգերի սահմանման նպատակը մաքսային մարմինների կողմից տրամադրված պարտադիր տեղեկատվության կիրառման միջոցով ներմուծվող կամ արտահանվող ապրանքների հայտարարագրման ժամանակ անճշտությունների և թերացումների թիվը նվազագույնի հասցնելն է,

6) Եվրոպական երկրներում կիրառվող՝ սահմանների համալիր կառավարման համակարգի լավագույն սկզբունքներին համահունչ պետական սահմանի անցման կետերում մաքսային ընթացակարգերի ներդրման նպատակով մշակվել է «Պետական սահմանի անցման կետերում պետական կառավարման մարմինների կողմից կիրառվող ընթացակարգերում «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրմանն ուղղված՝ ՀՀ կառավարության միջոցառումների 2015-2017 թվականների ծրագրի» նախագիծը: Ծրագրի իրականացման արդյունքում տարբեր պետական կառավարման մարմինների կողմից մաքսային սահմանին մատուցվող ծառայությունները կկենտրոնացվեն մեկ կետում, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին մատուցվող ծառայությունների որակը, կրճատել ժամկետները և տնտեսել այդ ծառայությունների մատուցման նպատակով պետության կողմից կատարվող ծախսերը:

Բիզնեսի ստուգումներին ուղղված բարեփոխումներ

Նշված բարեփոխումները, որպես գործարար համայնքի շրջանում պետության նկատմամբ վստահության ամրապնդման կարևոր երաշխիք, ներդրումային և գործարար միջավայրի հետագա բարելավման նպատակով տնտեսաիրավական նոր հարաբերությունների կառուցման տրամաբանության մեջ են: Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը քայլեր է նախաձեռնել՝ 2009 թվականից ընդունելով տեսչական բարեփոխումների հայեցակարգը: Վերջինս նպատակ ունի բարելավել գործող տեսչական

համակարգը՝ վերացնելով հաճախակի և ոչ տեղին ստուգումները, ոչ թափանցիկ տեսչական գործընթացները, վարչական կոռուպցիան և տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումները՝ անցում կատարելով ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի: Հայեցակարգում ամրագրված դրույթների իրականացման նպատակով 2011 թվականին համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարվեցին: Բարեփոխման արդյունքում սահմանվեցին մի շարք կարևոր դրույթներ և ստուգում իրականացնող բոլոր մարմիններն սկսեցին աշխատանքներն իրականացնել ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման ուղղությամբ:

Ներկա դրությամբ տեսչական համակարգի բարեփոխումների գծով մի շարք արդյունքներ ենք գրանցել: Ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունների կիսումը և ստուգաթերթերի առկայությունը ստուգում իրականացնող մարմինների համար դարձել է պարտադիր պահանջ: Սահմանվել է, որ ստուգում իրականացնող մարմինները, ըստ իրենց կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված մեթոդաբանության, տնտեսվարող սուբյեկտներին դասակարգում են ռիսկայնության երեք խմբերի՝ բարձր, միջին կամ ցածր և ստուգումները նպատակադրում են դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են: Սահմանվել է նաև, որ ստուգում իրականացնող պետական մարմինները պարտավոր են նախապես հաստատել և իրենց էլեկտրոնային կայքում հրապարակել ստուգումների տարեկան ծրագիրը: Արդյունքում կարող ենք փաստել, որ այս փոփոխությունները նպաստեցին վերացնել հաճախակի, ոչ տեղին և ոչ թափանցիկ ստուգումները տեսչական գործընթացներում: Ներկայումս գրեթե բոլոր տեսչություններում, բացի Լեզվի պետական տեսչությունից, ներդրված է ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը:

Վարչական կոռուպցիայի նվազեցման, տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումների վերացման, ինչպես նաև ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման նմատակով Կառավարությունը ձեռնամուխ է եղել տեսչական համակարգի օպտիմալացման ծրագրի իրականացմանը: Վերոնշյալ նպատակների իրականացման համար մշակվել են «Հայաստանի Հանրապետությունում տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և Հայաստանի Հանրապետության տեսչական համակարգի օպտիմալացման գործողությունների համառոտ ծրագրին հավանություն տալու

մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենսդրական փաթեթի նախագիծը: Վերջինս առաջիկայում նախատեսվում է ներկայացնել ՀՀ ազգային ժողովի հաստատմանը, որից հետո կտրվի բուն օպտիմալացման գործընթացի մեկնարկը: Մինչև ՀՀ ԱԺ կողմից օրենսդրական նոր կարգավորման ընդունումն արդեն իսկ իրականացվել է օպտիմալացման առաջին պիլոտային քայլը աշխատանքի պետական տեսչության և հիգիենիկ հակահամաճարակային տեսչության միաձուլմամբ: Նոր օրենքով նախատեսում է տեսչական մարմինների նոր և արդյունավետ համակարգ՝ կարգավորելով տեսչական մարմինների իրավական վիճակի, դրանց ստեղծման, կառավարման, գործունեության կազմակերպման սկզբունքների ու առանձնահատկությունների և դրանց հետ կապված այլ իրավահարաբերություններ:

Հանրային կառավարման բարելավում

Հանրային կառավարման բարելավումը Կառավարության հիմնական առաջնահերթությունն է: Այս ոլորտի բարեփոխումները հնարավորություն կտան ստանալ զգալի ֆիսկալ և տնտեսական օգուտներ՝ կապված ինչպես պետական եկամուտների և ծախսերի արդյունավետության, այնպես էլ գործարարության և մրցակցային պայմանների բարելավման հետ: Սրանք հետճգնաժամային աճի ապահովման համար խիստ անհրաժեշտ ռեսուրսներ են: Ուղղակիորեն մեր ուշադրության կենտրոնում է մեր տնտեսության առանցքային ոլորտներում (հանքարդյունաբերություն, բնապահպանություն, ավիացիա) օրենսդրական հիմքի ամրապնդումը և պետական պաշտոնյաների վարքագծի բարելավումը: Թափանցիկություն ներմուծելով և հստակեցելով պետական ու մասնավոր հատվածի դերն ու պարտավորությունները՝ հեռահաղորդակցության ու հանքարդյունահանման ոլորտներում մենք ակնկալում ենք ավելացնել մասնավոր ներդրումներն ու աշխատանքի հնարավորությունները մեր տնտեսության այս երկու առանցքային ճյուղերում:

Պետության կողմից ծառայությունների արագ ու անվտանգ մատուցման և պետական մարմինների հետ փոխգործակցության թափանցիկության ապահովման համար Կառավարությունը կարևորում է էլեկտրոնային թվային ստորագրության լայն կիրառումը

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայությունների էլեկտրոնային մատուցման ժամանակ: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ օրենսդրական դաշտում կարգավորել ՀՀ պետական մարմինների կողմից ծառայությունների էլեկտրոնային ձևով մատուցման և այդ ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման համար անհրաժեշտ տեխնիկական համակարգերի միասնականարության, անվտանգության և փոխգործակցման ապահովումը: Բացի այդ, էլեկտրոնային ծառայությունների մատուցման համակարգի տեխնիկական ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է ստեղծել էլեկտրոնային համակարգի կառավարման և սպասարկման միասնական կենտրոն, որը կապահովի էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկումը և համակարգումը: Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը օրենսդրական համապատասխան կարգավորման մեջ փոփոխություններ է մշակել:

Էլեկտրոնային առևտուրը կանոնակարգող օրենսդրական դաշտի բարելավումը հանրային կառավարման բարեփոխումների կարևոր տարրերից է: Այս իմաստով Հայաստանում էլեկտրոնային առևտրի և գործարքների էլեկտրոնային եղանակով կնքման համար իրավահարաբերությունների կարգավորման նպատակով մշակվել են օրենսդրական մի շարք փոփոխություններ: Վերջիններս պետք է նպաստեն Հայաստանում էլեկտրոնային հասարակությանը բնորոշ ծառայությունների զարգացմանը, էլեկտրոնային առևտրի ընձեռած հնարավորությունների օգտագործմանը, տեղական և օտարերկրյա գործարարների միջև առավել սերտ կապերի խթանմանը, ընկերությունների կողմից նորարարությունների մեջ ներդրումների իրականացմանը:

Հանրային կառավարման արդիականացման և թափանցիկության ապահովմանն ուղղված կարևոր քայլ էր դեռևս 2010 թվականին ՀՀ կառավարության կողմից գործարկված www.e-gov.am էլեկտրոնային կառավարման պորտալը: Վերջինիս միջոցով մեկտեղվել են պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների շտեմարանները, և դրանց օգտագործման հարմարավետ միջավայր է ապահովվել: Պորտալում մատուցվում են մի շարք էլեկտրոնային ծառայություններ, մասնավորապես, լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների

էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման և տեղեկատվական որոնման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման, ինտերնետով հրապարակային ծանուցման, մեկ անձից կատարվող գնումների, ինտերակտիվ բյուջեի, դատական տեղեկատվական համակարգի և այլ ոլորտներում:

Ներկայումս քայլեր ենք ձեռնարկում նոր էլեկտրոնային ծառայությունների ներդրման և ՀՀ էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ՝ առաջնորդվելով տվյալների բազաների միջև ամբողջական փոխգործողություն և տվյալների փոխանակման ապահովման սկզբունքով: Մասնավորապես, ներկայումս քննարկման փուլում է Համաշխարհային բանկի Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է էլ-կառավարման համակարգերի կառավարման և սպասարկման միասնական կենտրոնի ստեղծում, էլ-կառավարման վերաբերյալ տեխնիկական չափորոշիչների և կանոնների մշակում ու ներդրում՝ ինտերնետի միջոցով պետական տեղեկատվական համակարգերի միջև տվյալների ապահով փոխանակման ապահովման նպատակով, e-gov.am պորտալի և դրա հավելվածների ստեղծում պետություն-քաղաքացի ինտերակտիվ և առցանց ծառայությունները Apple և Android բջջային գործադիր ծրագրերի համար հասանելի դարձնելու նպատակով: 2014 թվականի սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացած, և արդեն իսկ ՀՀ Ազգային ժողով ներկայացված «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ու «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթում առկա է «Սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքը», որը ենթադրում է Այն դեպքում, երբ պետական մարմինը միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով կարող է անձնական տվյալը ձեռք բերել պետական այլ մարմնից, ապա անձնական տվյալների սուբյեկտից չի պահանջվում ներկայացնելու որոշակի գործողությունների համար անհրաժեշտ անձնական տվյալը, իսկ Անձնական

տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնության դեպքում անձնական տվյալներ մշակող համարվող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կարող են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ որոշակի գործողության համար անհրաժեշտ և անձնական տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնության մեջ ուղղակիորեն մատնանշված անձնական տվյալը:

Քաղաքացիական ծառայության քաղաքականությունը

Քաղաքացիական ծառայության քաղաքականության դերը հատկապես կարևորվում է տնտեսության զարգացման հետճգնաժամային տնտեսության զարգացման փուլում, որի տևական զարգացման համար մենք պետք է կարողանանք ներգրավել ու պահել մատչելի որակյալ մարդկային կապիտալ: Սա կբարելավի հաղորդակցությունը պետական ու մասնավոր հատվածի միջև և Կառավարման կանոնակարգերի բարելավման ճանապարհով հնարավոր կլինի զարկ տալ և ոչ թե խոչընդոտել Հայաստանի տնտեսական համակարգի մրցունակությանը: Թեև մրցունակ վարձրատրության ու փոխհատուցման քաղաքականության սահմանումը հեռանկարային նպատակ է, որը մեծապես կախված է մեր հարկաբյուջետային հնարավորություններից, սակայն մենք որոշել ենք գործիքներից մեկը՝ քաղաքացիական ծառայության կատարողականի վրա հիմնված վարձատրությունը, առաջիկայում կատարելագործել:

Պետական աշխատողների սոցիալական վիճակի բարելավման, ինչպես նաև համակարգում աշխատելու գրավչությունը բարձրացնելու նպատակով 2012 թ. ներդրվեց սոցիալական փաթեթը, ինչը 2012 թ. հնարավորություն ընձեռեց շահառուներին (քաղաքացիական ծառայողներ, պետական այլ ծառայողներ, ինչպես նաև կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպությունների աշխատողներ) և նրանց ընտանիքի անդամներին օգտվել որոշակի սոցիալական ծառայություններից՝ առողջության ապահովագրություն (2014 թ. առողջապահական փաթեթ), հիփոթեքային վարկի մարում, ուսման վճար, հանգստի ապահովում: Սա սոցիալական ուղղվածություն ունեցող փաթեթ է, և առաջին հերթին այս

փաթեթից շահում են ցածր եկամուտ ունեցող քաղճառայողները, քանի որ փաթեթը հավասարաչափ է տրամադրվում բոլորին:

Քաղաքացիական ծառայության համակարգում կատարողականի գնահատման համակարգի ներդրումից հետո պարբերական ատեստավորումների համակարգը վերանում է, ինչպես նաև համակարգը ապակենտրոնացման միտում ունի, որը սկսվել է երիտասարդ անձնակազմի աշխատանքի ընդունելու բարելավված ճկունությամբ:

Կառավարությունն աշխատակիցների մոտիվացման համար կավելացնի քաղաքացիական ծառայողների արդյունքների վրա հիմնված հավելավճարները (ՁԲԳ-3 մեկնարկիչ): Արդյունքի վրա հիմնված հավելավճարների ավելացման միջոցառումները նպատակ ունեն մեծացնել հանրային ոլորտի կարողությունն աշխատանքի ընդունել և պահպանել համապատասխան հմտություններով աշխատակիցների: Բանկը կօժանդակի նախնական գործողությանը ներկա համակարգի թերությունների փորձագիտական գնահատման միջոցով:

Պետական ֆինանսների կառավարում

Պետական ֆինանսների կառավարման մասով կցանկանայինք շարունակել ՊՖԿ համակարգի հիմնական գործընթացների հզորացումը, մասնավորապես՝ բյուջեի կատարողականի ուղղվածության խորացման ուղղությամբ՝ միևնույն ժամանակ ամրապնդելով ղեկավարների հաշվետվողականությունն ու եկամուտների կառավարումը: ՀՀ պետական ֆինանսների կառավարման համակարգի գործունեության արդյունավետության մոնիթորինգի իրականացման համար հիմքերի ստեղծման համար ՀՀ պետական ֆինանսների կառավարման արդի համակարգի որակի ամբողջական պատկերի ստացման նպատակով 2013 թվականին իրականացվել են ՀՀ պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության գնահատման աշխատանքներ, որի արդյունքում ներկայացվել են հանրապետության պետական ֆինանսական համակարգի ուժեղ և թույլ կողմերը, 2008թ.-ի գնահատումից հետո արձանագրված առաջընթացը, իրականացված ու սպասվող բարեփոխումները: Հաշվետվությունն անցել է միջազգայնորեն ընդունված պահանջներին համապատասխանության փորձաքննություն Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության քարտուղարությունում՝ ստանալով «PEFA CHECK»

որակի նշանը, ինչը վկայում է այն մասին, որ հանրապետությունում նպատակաուղղված աշխատանք է իրականացվում պետական ֆինանսների կառավարման համակարգը միջազգային չափանիշներին և հանրային պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների շրջանակներում Կառավարությունը շարունակելու է կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS) ներդրման աշխատանքները, ինչը հնարավորություն կընձեռի ավտոմատացնել ՀՀ պետական կառավարման մարմինների միջև ֆինանսական բնույթի տեղեկատվական հոսքերի կառավարումը:

Կառավարությունը կշարունակի նաև գնումների համակարգի բարեփոխումների իրականացումը, այդ թվում ապահովելով գնման բոլոր մրցակցային ընթացակարգերի՝ էլեկտրոնային ձևով կազմակերպումը, ինչը կնվազեցնի այդ համակարգում կոռուպցիոն ռիսկերը:

Կառավարությունը շարունակաբար իրականացնելու է նաև ծրագրային բյուջետավորման ներդրման բարեփոխումը, ստեղծվելու են անհրաժեշտ նախադրյալներ լիարժեք ծրագրային բյուջետավորման անցման համար՝ սկսած 2018 թվականից:

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրական բարեփոխումների ուղղությամբ 2013-14 ընթացքում Կառավարությունը վերանայել է ընդերքօգտագործման հետ կապված իր օրենսդրական շրջանակը: Այդ կապակցությամբ նշենք, որ համապատասխան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել 2014 թվականի սեպտեմբերի 11-ին:

Ենթակառուցվածքներ

Ենթակառուցվածքների ոլորտում տարվող քաղաքականությունը լինելու է շարունակական և ուղղված է լինելու պետական ծախսերի արդյունավետության բարձրացման պայմաններում ապահովել խմելու ջրի, որոգման համակարգերի և ճանապարհների կայուն զարգացում, որը ենթադրում է պետության կողմից իրականացնել

ինչպես ընթացիկ նորոգում և պահպանություն, այնպես էլ կապիտալ ծախսեր նոր ենթակառուցվածքների ստեղծման համար:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտում գործում են 5 ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերություններ:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի բարելավման և ֆինանսական կայունության հիմքում դրված են ոլորտի բարեփոխումների շարունակականության ապահովումը, նոր ներդրումային ծրագրերի իրականացումը, ջրային համակարգերի արդյունավետ կառավարումը՝ մասնավոր հատվածի առավել լայն ներգրավվածության միջոցով:

Կառավարությունը ջանալու է տարբեր գործիքների և սկզբունքների կիրառման միջոցով՝ ներառյալ պետություն-մասնավոր գործընկերության համագործակցությամբ, վարկային միջոցների հաշվին կատարվող ներդրումների քաղաքականությամբ բարձրացնել երկրում առկա ընկերությունների ծախսերի ծածկման մակարդակը և մատուցվող ծառայությունների որակը:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի կայունության ապահովման նպատակով վերջին տարիներին իրականացվում են մի շարք միջոցառումներ և ծրագրեր, որոնք կրում են շարունակական բնույթ: Նշված միջոցառումներն ու ծրագրերն ուղղված են կատարելագործելու հաշվառման համակարգերը, ապահովելու հուսալի, անխափան և անվտանգ ջրամատակարարում և ջրահեռացում, բարելավելու մատուցվող ծառայությունների որակը, բարձրացնելու սպասարկող անձնակազմի մասնագիտական ունակությունները: Այդ խնդիրների լուծմանն է ուղղված պետական, ինչպես նաև ներդրումային և վարկային միջոցների հաշվին իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրերը:

Ոռոգման ոլորտում ջրամատակարարներ են հանդիսանում 2 ջրառ իրականացնող ընկերություն և 42 ջրօգտագործողների ընկերություններ որոնք մատակարարում են ոռոգման ջուրը վերջնական սպառողներին:

Ոռոգման ոլորտում վերջին տարիներին իրականացվել են գործող համակարգերի բարելավման, վերակառուցման և նոր համակարգերի կառուցման աշխատանքներ՝ Համաշխարհային բանկի, Հազարամյակի մարտահրավերների և մի շարք այլ ծրագրերի

միջոցով: Արդյունքում վերակառուցվել և կառուցվել են ոռոգման ներքին ցանցեր, մայր ջրանցքներ և պոմպակայաններ: Վերակառուցվել է Մարմարիկի ջրամբարը:

Ոռոգման ոլորտում նախատեսվում է նոր ջրամբարների կառուցում, առկա ենթակառուցվածքների արդիականացում, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացում, մասնակցային կառավարման ամրապնդում, ջրօգտագործողների հետ առավելագույնս թափանցիկ և նոր մակարդակի հարաբերությունների ներդրում:

Տրանսպորտի ոլորտ

Այս ոլորտում Կառավարությունը վերջին տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեի, ՀԲ և ԱԶԲ ֆինանսավորմամբ զգալի ներդրումներ է կատարում ճանապարհների վերակազմման և արդիականացման ուղղությամբ: Հաջորդ տարիների ընթացքում ճանապարհային ոլորտի զարգացումը նույնպես կհանդիսանա Կառավարության առաջնահերթություններից մեկը:

Ճանապարհային ենթակառուցների ուղղությամբ կատարվող ծախսերը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով կիրականացվի ճանապարհների ֆինանսավորման ուսումնասիրություն, որի առաջարկությունների հիման վրա ՀՀ կառավարությունը կհաստատի ճանապարհային սեկտորի բարեփոխումների ռազմավարությունը: Ճանապարհային ակտիվների կառավարումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով կներդրվի և կշահագործվի Ճանապարհային ակտիվների կառավարման համակարգը, որը կօգնի ճանապարհային ենթակառուցների ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ կայացնելու:

Միջազգային առաջատար փորձի հիման վրա կմշակվի և կփորձարկվի կատարողականի վրա հիմնված ճանապարհների վերակազմման և պահպանման աշխատանքների գնման միասնական մրցութային փաթեթը և պայմանագիրը: Վերը նշվածի արդյունքում կապահովվի ՀՀ միջպետական և կենսական նշանակության ճանապարհների վերականգնման, պահպանման և շահագործուման աշխատանքների կայուն ֆինանսավորումը, ակտիվների ավելի արդյունավետ կառավարումը և 60 տոկոս ճանապարհների ընթացիկ պահպանումը և շահագործումը:

Տարածքային համաչափ զարգացում

Առաջիկա տարիներին ՀՀ կառավարության կարևորագույն խնդիրներից է նաև տարածքային համաչափ զարգացումը: Այդ նպատակով իրականացվելու է մարզերի հարաբերական առավելությունների գնահատում և դրանցով պայմանավորված՝ զարգացման ծրագրերի իրականացում:

Մեծապես կարևորվում է նաև ոչ միայն տարածքների համաչափ զարգացման նպատակով կապիտալ ներդրումների ներգրավումը, այլ նաև՝ դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը: Այս համատեքստում նախատեսվում է ստեղծել մեթոդաբանություն, որը հնարավորություն կընձեռի գնահատել իրականացվելիք կապիտալ ներդրումների արդյունավետությունը այդ տարածաշրջանում աղքատության կրճատման համատեքստում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է Հայաստանի սոցիալական ներդրումների հիմանդրամի նախորդ տարիների գործունեության արդյունքների ու փորձի հիմքի վրա Տարածքային զարգացման հիմնադրամի ստեղծում, որի գործիքակազմով էլ կգնահատվի նախատեսվող ծրագրերի միտվածությունը վերը նշված զարգացման ու համաչափության ապահովման խնդիրների լուծմանը, ինչպես նաև իրականացվելիք կապիտալ ներդրումների արդյունավետությունը: Հիմնադրամի գործունեությունը նախատեսվում է սկսել արդեն իսկ 2015թ. հունվարի 1-ից:

Վարչատարածքային բարեփոխումներ

ՀՀ-ում տեղական ժողովրդավարության ամրապնդման, տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու համար կարևոր նշանակություն ունեն, մասնավորապես, վարչատարածքային բարեփոխումները:

Նախատեսվում է տեղական ինքնակառավարման ոլորտում համաչափորեն կիրառել միջազգային փորձը՝ հատկապես իշխանության ապակենտրոնացման խորացման հնարավորությունը՝ այդ փորձի վերլուծության, տեղայնացման և ներդրման միջոցով: Բարեփոխման արդյունքում կլուծվի տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության գերակա խնդիրները՝ կապահովվեն նախադրյալներ ֆինանսական ապակենտրոնացման, տեղական

ինքնակառավարման մարմինների կարողությունների ու տեղական ժողովրդավարության զարգացման համար, զգալիորեն կբարձրանա ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը, համայնքների ֆինանսական անկախությունը և ինքնուրույնությունը: Համայնքների խոշորացման արդյունքում կիրականացվի նաև համամասնական ընտրական համակարգի աստիճանական ներմուծում:

Բարեփոխման հիմնական նպատակը համայնքների կարողությունների հզորացումն է, որը կբարձրացնի համայնքների կողմից իրականացվող ծախսերի արդյունավետությունը՝ նպաստելով ՏԻՄ մակարդակում բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Ծրագրի մոնիտորինգ և գնահատում

ԶԲԳ շարքի իրականացման հիմնական գործընկերը ՀՀ Ֆինանսների նախարարությունն է:

ՀՀ Ֆինանսների նախարարությունը նաև կանոնավոր պարբերականությամբ հավաքագրելու է ԶԲԳ-ներով նախատեսված բարեփոխումների արդյունքների վերաբերյալ մոնիտորինգի և գնահատման հիմնական ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ



Հովիկ Աբրահամյան